

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 դեկտեմբերի 2018 թվականի N 135--Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ «ՍՅՈՒՆԻՔՅԱՆ  
ԱՄԱՆՈՐ» ՄԻՋՈՑԱՌՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ «ԿԱՊԱՆԻ  
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՍՈՒԲՍԻԴԻԱ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ


Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի «Մշակութային միջոցառումների իրականացում» ծրագրով նախատեսված հատկացումները,

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ.

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզում «Սյունիքյան Ամանոր» միջոցառում կազմակերպելու նպատակով «Կապանի մշակույթի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը հատկացնել 2.000.000 (երկու միլիոն) դրամ, նրա հետ կնքելով հանձնարարության պայմանագիր:
2. Հաստատել «Սյունիքյան Ամանոր» միջոցառման կազմակերպական կոմիտեի կազմը, անցկացման ծրագիրը, աշխատակարգը, ծախսերի նախահաշիվը և ժամանակացույցը՝ համաձայն 1-5-րդ հավելվածների:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

*Է. ՊՈՂՈՍՅԱՆ*  
Է. ՊՈՂՈՍՅԱՆ



2018թ. դեկտեմբերի 14  
ք. Կապան

Կ Ա Ջ Մ Ա Կ Ե Ր Պ Ա Կ Ա Ն Կ Ո Մ Ի Տ Ե Ի Կ Ա Ջ Մ

«Սյունիքյան Ամանոր» միջոցառման

- |                    |   |
|--------------------|---|
| 1. Գ.Թադևոսյան     | ՀՀ Սյունիքի մարզպետի տեղակալ /Նախագահ/  |
| 2. Ս. Դավթյան      | ՀՀ Սյունիքի մարզպետարանի ֆինանսական<br>և սոցիալ տնտեսական զարգացման վարչության պետ                                    |
| 3. Մ. Գանդալյան    | ՀՀ Սյունիքի մարզպետարանի կրթության,<br>մշակույթի և սպորտի վարչության պետ  |
| 4. Ս. Ավետիսյան    | ՀՀ Սյունիքի մարզպետարանի տեղական<br>ինքնակառավարման և հանրապետական գործադիր<br>մարմինների հարցերով վարչության պետ     |
| 5. Ն. Ավանեսյան    | ՀՀ Սյունիքի մարզպետարանի քարտուղարության պետ  |
| 6. Ա. Սիմոնյան     | ՀՀ Սյունիքի մարզպետարանի կրթության,<br>մշակույթի և սպորտի վարչության մշակույթի և սպորտի<br>բաժնի ժ/պետ                |
| 7. Ա. Շահնազարյան  | ՀՀ Սյունիքի մարզպետարանի առողջապահության և<br>սոցիալական ապահովության վարչության սոցիալական<br>ապահովության բաժնի պետ |
| 8. Ա. Ոսկանյան     | ՀՀ Սյունիքի մարզպետարանի ընտանիքի, կանանց և<br>երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետ                         |
| 9. Թ. Կարապետյան   | ՀՀ Սյունիքի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի<br>վարչության սպորտի բաժնի գլխավոր մասնագետ                    |
| 10. Վ. Արզումանյան | «Կապանի մշակույթի կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն  |


19 12 2018

X *Grigori Tadevosyan*

ԳՐԻԳՈՐ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Подписано. TADEVOSYAN GRIGOR 1909590101

ՀՀ Սյունիքի մարզպետարանի  
գլխավոր քարտուղարի տեղակալ



Թադևոսյան


**ԱՆՑԿԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ**  
«Այունիքյան Ամանոր» միջոցառման

Միջոցառման նպատակն է

Հանդիսավորությամբ կազմակերպել մշակութային միջոցառում՝ հին հայկական ամանորյա սովորույթներին համապատասխան: Ազգային ավանդույթներից պահպանել միմյանց նվերներ տալը, այցելությունները, առատ հյուրասիրությունները, երգն ու պարը, հրավառությունը: Խթանել, ամրապնդել և զարգացնել ազգային ծեսերի ու ծիսակատարությունների զարգացումն ու տարածումը:

1. «Այունիքյան Ամանոր» միջոցառման շրջանակում կազմակերպել Ձմեռ Պապի և Ձյունանուշի այցեր.
  - ա/ Կապանի թիվ3 հատուկ կրթահամալիր՝ շնորհավորելու երեխաներին
  - բ/ Մարզի բժշկական կենտրոններ՝ շնորհավորելու 2019թ. հունվարի 1-ին ծնված երեխաներին և նրանց մայրերին
  - գ/ Մարզի համայնքներ՝ շնորհավորելու 6 և ավելի երեխաներ ունեցող ընտանիքներին
  - դ/ Մարզի համայնքներ՝ շնորհավորելու երկկողմանի ծնողազուրկ երեխաներին
  - ե/ «Կապանի Արծվաբույն» տարեցների կենտրոն՝ շնորհավորելու շահառուներին
2. Պսակադրում Արցախյան ազատամարտում զոհվածների շիրիմներին:
3. Ամանորյա համերգային ելույթներ մարզում տեղակայված N զորամասերում:
4. Մոմավառություն, պսակադրություն՝ Արցախյան ազատամարտում զոհվածների շիրիմներին;
5. Միջոցառման ակտիվ մասնակիցների խրախուսում:
6. Ուրախ տոնակատարություն, հյուրասիրություն այունիքյան ավանդական ուտեստներով:


19.12.2018

X 

ԳՐԻԳՈՐ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Подписано TADEVOSYAN GRIGOR 1909590101

«Այունիքի մարզպետարանի  
գլխավոր քարտուղարի տեղակալ»



Գ.Թադևոսյան

**ԱՇԽԱՏԱԿԱՐԳ**  
«Սյունիքյան Ամանոր» միջոցառման

**Նպատակը.**

Կազմակերպել մշակութային միջոցառում՝ կարևորելով հին հայկական ամանորյա սովորույթներն ու արարողությունները: Ազգային ավանդույթներից պահպանել միմյանց նվերներ տալը, այցելությունները, առատ հյուրասիրությունները, երգն ու պարը, հրավառությունը: Խթանել, ամրապնդել և զարգացնել ազգային ծեսերի ու ծիսակատարությունների զարգացումն ու տարածումը:

**Միջոցառման պատվիրատուն և կատարողը.**

«Սյունիքյան Ամանոր» միջոցառման պատվիրատուն է ՀՀ Սյունիքի մարզպետարանը, կատարողը՝ «Կապանի մշակույթի կենտրոն» ՊՈԱԿ-ը:  
Միջոցառման ղեկավարումն իրականացնում է միջոցառման կազմակերպման նպատակով ստեղծված կազմակերպական կոմիտեն և «Կապանի մշակույթի կենտրոն» ՊՈԱԿ-ը:

**Միջոցառման ժամկետը և վայրը.**

Միջոցառումն անց է կացվելու 2018թ. դեկտեմբեր և 2019թ. հունվար ամիսներին՝ մարզի համայնքներում:

**Միջոցառման ընթացքը.**

«Սյունիքյան Ամանոր» միջոցառումը կազմակերպվում է ըստ ծրագրի՝ հաստատված ՀՀ Սյունիքի մարզպետի կողմից, որտեղ արտացոլված են ժամանակացույցը և առանձին միջոցառումների անցկացման վայրը:

Միջոցառման ընթացքում տեղի ունեցող փոփոխությունները համաձայնեցվելու են կազմակերպական կոմիտեի հետ:

**Միջոցառման ծախսերը.**


Տոնակատարության անցկացման հետ կապված ծախսերը /որանսպորտ, նվերներ, հուշանվերներ, սնունդ և այլն/ հոգում է միջոցառման կազմակերպիչը՝ համաձայն հաստատված նախահաշվի:

19.12.2018

X 

ԳՐԻԳՈՐ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Подписано: TADEVOSYAN GRIGOR 1909590101

ՀՀ Սյունիքի մարզպետարանի  
գլխավոր քարտուղարի տեղակալ  Թադևոսյան

Հավելված 4  
 ՀՀ Սյունիքի մարզպետի  
 2018թ. դեկտեմբերի 14-ի  
 N 135 -Ա որոշման

**ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎ**  
 «Սյունիքյան Ամանոր» միջոցառման

	Ծախսերի անվանումը	Հոդված	Գումարը /հազար դրամ/
1	Տրանսպորտային միջոցների վարձակալություն	4216	135.0
2	Սարքերի և սարքավորումների վարձակալություն	4216	70.0
3	Հանրային սննդի ծառայություններ	4236	989.0
4	Նվերներ	4237	393.0
5	Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	4239	108.0
6	Այլ մասնագիտական ծառայություններ	4241	285.0
7	Գրասենյակային պիտույքներ	4261	20.0
	<b>Ընդամենը</b>		<b>2,000.0</b>


19 12 2018

**X** *Տ. Թևոսյան*

ԳՐԻԳՈՐ ԹԱՎԵՎՈՍՅԱՆ

Подписано. TADEVOSYAN GRIGOR 1909590101

ՀՀ Սյունիքի մարզպետարանի  
 Գլխավոր քարտուղարի տեղակալ **Բ. Թադևոսյան**



**ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ**  
 «Սյունիքյան Ամանոր» միջոցառման

h/h	Ժամանակը	Միջոցառման անվանումը	Վայրը
1	26.12.2018թ	Ամանորի տոնական այցելություն Կապանի թիվ 3 հատուկ կրթական համալիր և նվերների հանձնում երեխաներին, ուրախ ժամանցի կազմակերպում	ք. Կապան
2	27.12.2018թ	Ձմեռ պապի և Ձյունանուշի այց մարզի երկկողմանի ծնողագուրկ երեխաներին, բազմազավակ ընտանիքներին	Մարզի համայնքներ
3	28.12.2018թ	Ամանորի տոնակատարություն և հյուրասիրություն՝ սյունիքյան ավանդական ուսեստներով	ք. Կապան
4	30.12.2018թ.	Ձմեռ պապի և Ձյունանուշի այց Կապանի «Արծվաբույն» տարեցների կենտրոն	ք. Կապան
5	2.01.2019թ.	Ձմեռ պապի և Ձյունանուշի այց 2019թ. հունվարի 1-ին ծնված երեխաներին և նրանց մայրերին	Մարզի համայնքներ
6	06.01.2019թ	Մոմավառություն, ամանորյա արարողակարգ	Մարզի համայնքներ
7	07.01.2019թ	Պսակադրություն Արցախի ազատագրման և ապրիլյան քառօրյա պատերազմում զոհվածների շիրիմներին	Մարզի համայնքներ
8	Հունվար	Համերգային ելույթներ մարզում տեղակայված N գործարաններում	ՀՀ Սյունիքի մարզ N գործարաններ

19 12 2018

X *S. Grigor*

ԳՐԻԳՈՐ ԹԱՂԵԿՈՍՅԱՆ

ՀՀ Սյունիքի մարզպետարանի գլխավոր քարտուղար Ք. Թաղևոսյան



Ք. Թաղևոսյան SYAN GRIGOR 1909590101